Աբովյանի ԳԱՐՈՒՆ – 2026
Abovyan SPRING-2026

Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ը կազմակերպում է բաց մրցաշար՝ միջազգային և ազգային վարկանիշների հաշվարկներով: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով՝ 9 խաղափուլով՝ **Ա** և **Բ** խմբերով:

Ա խմբում մասնակցության իրավունք ունեն միջազգային վարկանիշով կամ առնվազն երկրորդ կարգային FIDE ID–ով շախմատիստները:

Բ խմբի մրցաշարը անցկացվելու է ըստ տարիքային ենթախմբերի՝ մինչև 8, մինչև 10, մինչև 12: Մինչև 8 տարեկանների խմբում մասնակցության իրավունք ունեն առնվազն չորրորդ կարգային շախմատիստները, մինչև 10՝ երրորդ, մինչև 12՝ երկրորդ կարգային շախմատիստները:

Անցկացման վայրը՝ Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ, ք. Աբովյան, Հանրապետության պող., 1/85 շ., հեռ.+374 222 2-10-13:

Մրցաշարի ժամակարգը՝ Ա խմբում 90 ր. + 30 վրկ. յուրաքանչյուր քայլի համար՝ սկսած առաջին քայլից, Բ խմբում 60 ր. + 30 վրկ. յուրաքանչյուր քայլի համար՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ՝

1. հատված Բուխհոլցի գործակից,
2. լրիվ Բուխհոլցի գործակից,
3. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակ,
4. անձնական հանդիպում:

Ժամանակացույց	
I տուր	11.04.2026թ. ժ. 12:00
II տուր	12.04.2026թ. ժ. 12:00
III տուր	13.04.2026թ. ժ. 16:00
IV տուր	14.04.2026թ. ժ. 16:00
V տուր	15.04.2026թ. ժ. 16:00
VI տուր	16.04.2026թ. ժ. 16:00
VII տուր	17.04.2026թ. ժ. 16:00
VIII տուր	18.04.2026թ. ժ. 12:00
IX տուր	19.04.2026թ. ժ. 12:00, փակման արարողություն:

Մրցանակներ Ա ԽՈՒՄԲ		Հատուկ մրցանակներ	
I մրցանակ	150 000 ՀՀ դրամ	I կանայք	25 000 ՀՀ դրամ
II մրցանակ	130 000 ՀՀ դրամ	I մինչև 12 տ.	20 000 ՀՀ դրամ
III մրցանակ	80 000 ՀՀ դրամ	I 50+ տ.	15 000 ՀՀ դրամ
IV մրցանակ	50 000 ՀՀ դրամ		
V մրցանակ	30 000 ՀՀ դրամ		

Բ ԽՈՒՄԲ	I մրցանակ	II մրցանակ	III մրցանակ	I աղջիկ
Մինչև 8	15 000 ՀՀ դրամ	10 000 ՀՀ դրամ	7 000 ՀՀ դրամ	5 000 ՀՀ դրամ
Մինչև 10	20 000 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ	10 000 ՀՀ դրամ	7 000 ՀՀ դրամ
Մինչև 12	25 000 ՀՀ դրամ	20 000 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ	10 000 ՀՀ դրամ

*Բոլոր մրցանակները հարկվելու են համապատասխան ՀՀ հարկային օրենսգրքի:

Մուտքավճարներ Ա խմբում	
Առանց FIDE վարկանիշ	15 000 ՀՀ դրամ
Մինչև 2000 FIDE վարկանիշ	10 000 ՀՀ դրամ
2000-2100 FIDE վարկանիշ	7 000 ՀՀ դրամ
2101-2300 FIDE վարկանիշ	5 000 ՀՀ դրամ
2301 և բարձր FIDE վարկանիշ	առանց մուտքավճարի

Բ խմբում մուտքավճարը կազմում է 4000 ՀՀ դրամ:

Գրանցվելու համար անհրաժեշտ է կատարել մուտքավճար Աբովյանի գանձապետարանի **900105201652** հաշվեհամարին՝ նպատակ դաշտում նշելով մրցաշարի անունը, մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը, ծննդյան տարեթիվը և կարգը/վարկանիշը: Կտրոնը պարտադիր ներկայացնել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ կամ ուղարկել anminasyan67@gmail.com էլ. հասցեին:

Առաջնության ընթացքում գործելու է բողոքարկման հանձնաժողով: Դիմում-բողոքները պետք է ներկայացնել տուրի ավարտից հետո մեկժամյա ընթացքում, գրավոր ձևով, կցելով **900105201652** հաշվեհամարին վճարված 20 000 ՀՀ դրամի կտրոն: Բողոքի պահանջը բողոքարկման հանձնաժողովի կողմից չբավարարվելու դեպքում գումարի հետվերադարձ չի կատարվում: